



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 14 ՍԵՄՏԵՄԵՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 141

ԻՐԻԿՆԱՅԻՆ ԱՂՈԹՔ

Տէր, օգնութեան կը կանչեմ քեզ, հասիր ինձի,
լսէ աղաղակս, կ'աղաչեմ քեզի:
Իմ աղօթքս քեզի նատուցուած խունկ թող ըլլայ,
վեր բարձրացած ձեռքերս՝ իրիկնային զոհ:
Տէր, բերանիս պահապան դիր,
պահակ կարգէ շրթներուս դուռին առջեւ:
Թոյլ մի՛ տար որ սիրտս չարիքին հաւանի.
մի՛ ձգեր որ գործակից դառնամ
անօրէն մարդոց անբարիշտ արարքներուն,
կամ անոնց փարթամ կեանքին փափաքին:
Բայց ես աչքերս քեզի յառած եմ, Տէր, իմ Տէրս,
յոյսս քու վրադ դրած եմ, զիս անպաշտպան մի՛ ձգեր:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխահիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՂՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ
✠
ԵԼԻՑ Լ (30) ԳԼՈՒԽ
✠

ԽՈՒՆԿ ԾԽԵԼՈՒ ՍԵՂԱՆԸ (30:1-10)

«Խունկ ծխելու սեղան մը շինէ՛ եւ զանիկա դիր վկայութեան վրայի քաւութեան առջեւ վկայութեան փապանակին քով եղած վարագոյրին առջեւ, ուր եւ քեզի պիտի հանդիպիմ: Ահարոն անոր վրայ անուշահոտ խունկ պիտի ծխէ: Ամէն առօրեայ ճրագները շրկած արեւն եւ իրիկուան ճրագները վառած արեւն խունկ պիտի ծխէ, որ Տիրոջ առջեւ մշտնջենական խունկ ըլլայ ձեր ազգերուն մէջ: Անոր վրայ օտար խունկ, կամ ողջակէզ, կամ հացի ընծայ չմատուցանէք. ոչ ալ անոր վրայ նուէր թափէք: Ահարոն փարին անգամ մը անոր եղջիրներուն վրայ քաւութիւն պիտի ընէ»:

Աստուած կը շարունակէ փալու պատուէրը Վկայութեան խորանին սպասներուն, եւ այս պարագային խունկ ծխելու սեղանին շինելուն կապակցաբար: Քառակուսի ոսկիապար, չորս եղջիրներով: Անորուն եւ իրիկունը միմիայն խունկ մատուցանելու համար: Այս պարագային մենք գիտենք Մաղմուներէն երբ Դաւիթ իր աղօթքները կը նմանցնէ խունկի ըսելով. «**Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր: Համբարձումն ձեռաց իմոց պարարագ երեկոյի**»: Սա կը նշանակէ ոչ թէ պարզապէս խունկ ծխելու, այլ նաեւ խունկին հետ աղօթք բարձրացնելու առ Աստուած: Մանաւանդ երբ Ահարոն ինք պիտի ծխէ, կը նշանակէ ժողովուրդին աղօթքներն ու խնդրանքները իր աղօթքներուն հետ միասին Աստուծոյ ընծայելու:

Այս պատուէրին հետ նաեւ ամենակարեւոր զգուշաւորութիւնը, որպէս զի անոր վրայ օտար խունկ, կամ ողջակէզ չմատուցանէք: Այսինքն օտար պաշտամունք չընծայէք: Այն ինչ որ Աստուծոյ կը պարկանի, եւ այն ինչ որ Աստուած թելադրեց այդ մէկը զգուշաւորութեամբ պահելու:

ՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՏՈՒՐՔԸ (30:11-16)

«Երբ Իսրայէլի որդիներուն հաշիւը առնելու ըլլաս՝ իրենց թիւին նայելով, այն արեւն անոնց ամէն մէկը իր հոգիին փրկանքը պիտի փայ Տիրոջ: Մրբարանին սիկդին համեմար կէս սիկդ արծաթ պիտի փայ: Մէկ սիկդը քսան քերաթ է: Երբ ձեր հոգիներուն քաւութիւն ընելու համար Տիրոջը ընծայ փաթ՝ կէս սիկդէն ոչ հարուստը աւելի ու ոչ աղքատը պակաս պիտի փայ»:

Այս հաստատումն մէջ կը խօսի մարդահամարի մասին: Հ.Կ. մէջ մարդահամարը արգիլուած էր: Այս պարագային Աստուած ինք է որ կ'արքայօժէ. եւ երկու առիթներով: Առաջին՝ Եգիպտոսի ելքի ժամանակ, եւ երկրորդը՝ մէկ փարի յետոյ: Մարդահամարը երկու նպատակներով.

1. Իմանալու համար անդրանիկներուն թիւը, որպէսզի անոնց փոխարէն դեպքերը ընծայուին փաճարին:
2. Որպէսզի ժողովուրդը րեսնէ թէ հակառակ անոնց սրացած հարուածներուն, իրենք աճած են թիւով: Անոր մէջ րեսնելու Աստուծոյ պաշտպանութիւնը եւ օրհնութիւնը:

Այս մարդահամարի ժամանակ նաեւ ամէն մէկը, հարուստ թէ աղքատ, հաւասարապէս իր հոգիին փրկանքը պիտի փայ Տիրոջ: Կէս սիկդ արծաթ (1 սիկդ=20 քարաթ=10 կրամ): Ուրեմն բոլորին փրկանքը հաւասար է: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Դուք փրկանքով գնուած էք»: Այդ փրկանքը Քրիստոսի արիւնով, հարուստին եւ աղքատին հաւասարապէս:

ՊՐԻՆՁԷ ԱԲԱԶԱՆԸ (30:17-21)

Պատուէրը կը շարունակուի ու Տէրը կ'ըսէ. «**Պղինձէ աւազան մը շինէ, որպէսզի Ահարոնն ու իր որդիները իրենց ձեռքերն ու ոտքերը լուան: Երբ անոնք վկայութեան խորանը մտնելու ըլլան, կամ սեղանին մօտենալու ըլլան՝ պաշտամունք կատարելու եւ կրակով Տիրոջ զոհ մատուցանելու համար, ջրով թող լուացուին, որպէսզի չմեռնին**»:

Պղինձէ աւագանը պիտի գերեզուէր Վկայութեան խորանին եւ գոհասեղանին մէջտեղը: ուրեմն նախքան Վկայութեան խորան մտնելը քահանայապետն ու քահանաները պէտք էր որ լուային իրենց ձեռքերն ու ոտքերը: Նախ պղինձը խորհրդանիշ է դարասպանի: Ուրեմն, ան որ կը մօտենայ աւագանին եւ ջուրով կը լուացուի գերծ կը մնայ դարասպարտութենէն: Իսկ ան որ չի լուացուիր, անոր բաժինը՝ պղինձն է, այսինքն՝ դարասպարտութիւնը:

ՕԾՄԱՆ ԻԻՂԸ (30:22-33)

Կարեւոր մէկ պատուիրան սուրբ օծման իւղին կապուած: «Սուրբ օծման իւղ պատրաստես, որպէսզի անով օծես վկայութեան խորանը ու վկայութեան քահանայները: Սեղանը ու անոր բոլոր անօթները եւ աշխանակը ու անոր գործիքները եւ խունկի սեղանը: Պիտի սրբես, որպէսզի ամենասուրբ ըլլան: Ահարոնն ու իր որդիները պիտի օծես ու սուրբ պիտի ընես զանոնք, որպէսզի ինծի քահանայութիւն ընեն: Մարդու մարմնի վրայ պիտի չթափուի ան եւ անոր բաղադրութեանը պէս անոր նմանը չլինէք: Անկա սուրբ է ու ձեզի սուրբ պիտի ըլլայ: Ով որ անոր նմանը շինէ, կամ ով որ անկէ օտարականի վրայ դնէ, իր ժողովուրդէն պիտի կորսուի»:

Օծման իւղին համար 5 տեսակ նիւթ կը պահանջուի: Զմուռս, կիներմոն, փարսին, կասիա, խնկեղէգ, ձէթ: Այս իւղով օծելու եւ սրբելու: Օծել կը նշանակէ յարուստ նպատակի մը համար օգտագործել միայն, եւ այս պարագային Աստուծոյ ընծայուած: Յանկարծ ուրիշ բանի համար չ'օգտագործեն: Օծելը նաեւ կնքելու, դրոշմելու մէկ արարայայտութիւնը, ինչ որ նաեւ անոր գործածութիւնը կը տեսնենք մկրտութեան պահուն, երբ անհարը ջուրէն դուրս կու գայ իր մարմնի անդամները սուրբ իւղով, միւռնով կ'օծուի, կը դրոշմուի: Կը նշանակէ այդ անձը, եւ այդ անձին դրոշմուած մարմնի անդամները յարացնելու Անոր, որուն անունովը կը դրոշմուի, կ'օծուի:

Այս պատուիրանին կը յաջորդէ անմիջապէս զգուշաւորութիւն մը, որ չըլլայ թէ այդ իւղը մէկ այլ ուրիշ նպատակի մը համար օգտագործուի: Որովհետեւ անկա սուրբ իւղ է, ալ սովորական իւղ չէ, Աստուծոյ համար յարուստ: Այս պատուիրանը դաստիարակիչ նպատակ կը հետապնդէ, անով որպէսզի ժողովուրդը կարենայ զանազանել Աստուծոյ նուիրուած բանին եւ իր առօրեայ ու անձնական գործածութեան համար շինուած բանին միջեւ:

Նոյնը կը վերաբերի նաեւ խունկի պարագային:

ԽՈՒՆԿԸ (30:34-38)

«Խունկ շինէ մաքուր ու սուրբ: Անկէ քիչ մը ծեծէ շաք բարակ ու վկայութեան առջեւ դիր, ուր ես քեզի պիտի հանդիպիմ: Անկա ձեզի ամենասուրբ պիտի ըլլայ: Այն քու շինելու խունկիդ բաղադրութիւնը ձեզի համար չլինէք: Ով որ հոտոտելու համար անոր նմանը շինէ, իր ժողովուրդէն պիտի կորսուի»: